Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսի վերլուծությունը 2019թ-ի համար, ըստ «Հերիթիջ» հիմնադրամի գնահատականների

Մինասյան Դ.
Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան (Հայաստան, Երևան)
davit.minasyan.98@mail.ru

Վճռորոշ բառեր՝ Տնտեսական Ազատության Ինդեքս, «Հերիթիջ» հիմնադրամ, տնտեսական ազատությունը պայմանավորող գործոններ, հիմնական կատեգորիաներ:

Индекс Экономической Свободы Армении-2019 по оценкам исследовательского центра “Heritage Foundation”

Минасян Д.
Армянский Государственный Экономический Университет (Армения, Ереван)
davit.minasyan.98@mail.ru

Резюме: В статье кратко представлена Индекс Экономической Свободы и его основные компоненты, по данным 2019 года исследовательского центра “Heritage Foundation” сделано Анализ экономики Армении, выявлена характеристика экономической свободы страны для каждого компонента свободы. Индекс сравнивается с показателями 2018-го года. Еще представлено положение Армении по экономической свободе среди европейских стран, стран средней и западной Азии, СНГ, ЕЭС. Экономическая свобода определяется на основе 12 качественных и количественных факторов с одинаковыми весами. Оценка экономической свободы Армении была оценена 66.7, с которым Армения занимает 44-ое место по всему миру и 24-ое место среди стран Европы. Сильнейшие факторы Армянской экономической свободы являются бизнес свобода и свобода торговли, а слабейшие стороны: борьба с коррупцией и свобода судебной системы.
Ключевые слова: Индекс Экономической Свободы, оценки исследовательского центра “Heritage”, факторы, определяющие экономическую свободу, основные категории

The Index of Economic Freedom of Armenia-2019 according to the evaluations of the “Heritage Foundation”

Minasyan D.
Armenian State University of Economics (Armenia, Yerevan)
davit.minasyan.98@mail.ru

Abstract: The main topic of the article is Armenia in the world report of economic freedom 2019. It represents Armenian economic freedom compared with the index of 2018, characteristics of Armenian economy in different dimensions of the index of economic freedom, comparative analyze of Armenian economy among European countries, countries of middle and eastern Asia, Post Soviet and Eurasian Economic Union. There is also short information about the index and it's structure. Economic freedom is measured based on 12 quantitative and qualitative factors with equal weights given to each. Economic freedom score of Armenia is 66.7, making its economy 47th freest in the world and 24th among 44 countries in the Europe region. The strongest factors are Business freedom and trade freedom and country needs improvements in Government Integrity and Judicial Effectiveness.
Keywords: Index of Economic Freedom, “Heritage Foundation”, factors determining economic freedom, main categories

«Հերիթիջ» հիմնադրամը տարբեր պաշտոնական աղբյուրների տվյալների հիման վրա գնահատել և 2019թ. հրապարակել է 186 երկրների համար 2019 թ.-ի տնտեսական ազատության ինդեքսները: Տնտեսական ազատության ինդեքսը գնահատվում է ըստ 12 գործոնների: Դրանք են՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը (Property Rights), դատական համակարգի արդյունավետությունը (Judicial Effectiveness), կոռուպցիայից ազատությունը(Government Integrity), ֆիսկալ ազատությունը (Fiscal Health), հարկային բեռը (Tax Burden), կառավարության ծախսումները (Government Spending), գործարարության ազատությունը (Business Freedom), աշխատանքի ազատությունը (Labor Freedom), դրամավարկային ազատությունը (Monetary Freedom), առևտրի ազատությունը (Trade Freedom), ներ-

դրումների ազատությունը(Investment Freedom) և ֆինանսական ազատությունը (Financial Freedom): Այդ ինդեքսի գնահատման համար կիրառվում է 0-ից մինչև 100 բալանոց գնահատման համակարգ: Ընդ որում՝ բարձր գնահատականը վկայում է տնտեսական ազատության ավելի մեծ աստիճանի մասին [**1**]:

«Հերիթիջ» հիմնադրամի կողմից դիտարկվող երկրները ըստ տնտեսական ազատության ինդեքսի համապատասխան, դասակարգում է հինգ խոշոր կատեգորիաների: Այսպես, 80% և ավելի ինդեքս ունեցող երկրները համարվում են տնտեսապես «ազատ», 70.0-79.9%՝ «հիմնականում ազատ», 60.0-69.9%՝ «չափավոր ազատ», 50.0-59.9%՝ «հիմնականում ոչ ազատ», 50%-ից ցածր՝ «ճնշված» երկրներ:

2019թ. տնտեսական ազատության ինդեքսի գնահատման համար «Հերիթիջ» հիմնադրամի փորձագետները հիմք են ընդունել 2017թ. հուլիսի 1-ից մինչև 2018թ. հունիսի 30-ը ընկած ժամանակաշրջանի տնտեսական ցուցանիշները: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ որոշ գործոններ գնահատվել են պատմական տեղեկատվության հիման վրա: Այսպես, օրինակ, 2019թ. դրամավարկային ազատություն գործոնի գնահատման համար հիմք է ընդունվել 2015թ-ի հունվարի 1-ից 2017թ-ի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակաշրջանի միջին կշռված տարեկան գնաճը:

Հայաստանի գնահատականները. «Տնտեսական ազատության ինդեքս 2019» զեկույցում Հայաստանի դիրքը վատացել է և աշխարհի 180 երկրների շարքում Հայաստանը ներկայումս գրավում է 47-րդ տեղը՝ նախորդ տարվա 44-րդ տեղի փոխարեն: Թեև, նկատենք, որ տնտեսական ազատության Հայաստանի գնահատականը (67.7 միավոր) բարձր է համաշխարհային միջինից (60.8 միավոր) և ցածր տարածաշրջանային միջինից (68.6): (Գծապատկեր 1)

2018թ-ի համեմատ բարելավվել են սեփականության իրավունքը, աշխատուժի ազատությունը, դրամավարկային ազատությունը և առևտրի ազատությունը, վատացել են դատական արդյունավետությունը, կոռուպցիայից ազատությունը, գործարարության ազատությունը, կառավարության ծախսումները, ֆիսկալ ազատությունը, անփոփոխ է մնացել հարկային բեռը, ներդրումների ազատությունը և ֆինանսական ազատությունը: (Գծապատկեր 2) Վերոնշյալ գործոններում կատարված փոփոխությունների արդյունքում Հայաստանի 2019թ-ի տնտեսական ազատության գնահատականը նախորդ տարվա համեմատ նվազել է 1 միավորով:



Գծապատկեր 1. «ՀՀ ՏԱՀ-ն համեմատած Եվրոպայի ու Աշխարհի միջին ցուցանիշների հետ»: Աղբյուր՝ https://www.heritage.org/index/explore?view=by-region-country-year&u=636892187437943192

Գծապատկեր 2. Աղբյուր՝



https://www.heritage.org/index/explore?view=by-region-country-year&u=636892187437943192

Ներկայացնենք «Տնտեսական ազատության ինդեքս 2019» զեկույցում դիտարկվող առանձին գործոնների վարքագիծը:

- **«Սեփականության իրավունքի պաշտպանության»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ(55.3) ավելացել է 1.9 միավորով, կազմելով 57.2 միավոր: Սա Հայաստանի ամենաբարձր ցուցանիշն է նախորդ տարիների հետ համեմատած և այն վերջին 2 տարում ավելացել է կրկնակի անգամ, սակայն ըստ «Հերիթիջ» հիմնադրամի, «Մասնավոր սեփականությունը դեռ թույլ է պաշտպանված:

Դատական համակարգն այնքան անարդյունավետ է և կոռումպացված, որ արտադատարանական լուծումներն ու արբիտրաժը տարածված բնույթ են կրում: Սեփականության իրավունքը դժվարությամբ է պաշտպանվում: Դատական համակարգում կոռուպցիան, ինչպես նաև բռնագրավման դեպքերը տարածված են» :

- **«Կոռուպցիայից ազատություն»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 1.9 միավորով և կազմել 38.6 միավոր: «Կոռուպցիայից ազատություն» գործոնի վերաբերյալ Հերիթիջի փորձագետները նշել են, որ «Հայաստանում Ռուսաստանի հետ միավորվելու և Հայաստանի տնտեսության ու տարածաշրջանային անվտանգության տեսանկյունից Ռուսաստանի ազդեցությունը մեծանալու արդյունքում համատարած կոռուպցիան խորացել է: Ինչպես հայտնում են, կաշառակերությունն ու խնամի-դրացիական հարաբերությունները տարածված են կառավարական պաշտոնյաների շրջանում, որոնք հազվադեպ են քրեորեն հետապնդվում կամ հեռացվում պաշտոնից՝ իրենց պաշտոնական դիրքը չարաշահելու համար: Դատական համակարգը տառապում է անկախության և թափանցիկության պակասից: Ոստիկանության հակաիրավական վարքագիծը դժվարացնում է օրենքի կիրարկումը»:
- **«Դատական համակարգի արդյունավետությունը»** Հերիթեջ հիմնադրամը սկսել է գնահատել 2017 թ-ից: Վերջին 3 տարիների համար Հայաստանի ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 42.5, 47.4, և 46.3 միավոր:

Հայաստանի ցուցանիշը նույնությամբ կրկնում է Ռուսաստանի ցուցանիշի դինամիկան շատ չնչին շեղումներով, իսկ ԵԱՏՄ երկրներից գերազանցում է միայն Կիրգիզստանի ցուցանիշը: ՀՀ դատական համակարգը Տնտեսական ազատության 2019-ի զեկույցում բնութագրվում է որպես դանդաղ գործող, որն ունի արդյունավետության, անկախության ու թափանցիկության պակաս: Դատավորները հիմնականում հիմնվում են ավելի բարձր ատյանների խորհուրդների վրա՝ դարձնելով նրանց ընդունած որոշումը արտաքին գործոններից կախված:

- **«Հարկային բեռը»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ չի փոխվել և կազմում է 84.7միավոր: Նկատենք, որ հարկաբյուջետային ազատությունը չափում է գործարարության հարկային բեռը, որը ներառում է ինչպես ուղղակի հարկերի, այսինքն՝ եկամտահարկի և շահութահարկի բեռի, այնպես էլ ՀՆԱ-ում հարկային բեռի տեսակարար կշռի ցուցանիշը: 2019թ.-ի զեկույցում ընդհանուր հարկային բեռը կազմել է ՀՆԱ-ի 21.3%-ը, որը նվազել է 2017թ-ի նկատմամբ 2.2%-ով:
- **«Ֆիսկալ առողջության»** գնահատականը նույնպես սկսվել է հաշվարկվել 2017 թ-ից և ունի արտահայտված նվազման միտում: Վերջին 3 տարիներում ցուցանիշի արժեքը նվազել է 29.9 միավորով՝ 82.9-ից իջնելով 53-ի: Բյուջեի դեֆիցիտը կազմում է ՀՆԱ-ի 5.1%-ը, իսկ հասարակական պարտքը ՀՆԱ-ի 53.5%-ը:
- **«Կառավարության ծախսումներ»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 1 միավորով՝ դառնալով 70 միավոր: Կառավարության ծախսումները ՀՆԱ-ում 2018թ.-ին ավելացել են 0.6%-ով և կազմել 26.4%. որի պատճառով էլ Հայաստանի գնահատականը այս գործոնի գծով վատացել է:
- **«Գործարարության ազատության»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 0.4 միավորով և կազմել 78.3 միավոր՝ չնայած այն հանգամանքին, որ «Հերիթիջի» փորձագետները արդյունավետ են գնահատում Հայաստանում գործարարության կանոնակարգման դաշտը: Զեկույցում հատկապես նշվում է որ նոր բիզնես սկսելու համար կապիտալի նվազագույն շեմը վերացվել է ինչպես նաև արդիականացվել է բիզնեսի սնանկ ճանաչման ընթացակարգը:
- **«Աշխատանքի ազատություն»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ լավացել է 1.5 միավորով և կազմել 71.4 միավոր: «Աշխատանքի ազատություն» գործոնի ցուցանիշները և «Հերիթիջի» փորձագետները վերցնում են Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը» հետազոտությունից: Ընդ որում, օգտագործվող ցուցանիշների մի մասը հարցումների արդյունք են, իսկ մյուս մասը վերցվում են տվյալ երկրի պաշտոնական աղբյուրներից: ՀՀ-ն բնութագրվում է աշխատավարձի միջին մակարդակով և բավականին լայն ստվերային աշխատաշուկայի առկայությամբ:

• **«Դրամավարկային ազատություն»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ բարելավվել է 2 միավորով և կազմել 77.8 միավոր՝ գերազանցելով համաշխարհային միջինը և մոտենալով Եվրոպայի միջին ցուցանիշին:

• **«Առևտրի ազատություն»** գործոնի գնահատական նախորդ տարվա համեմատ բարելավվել է 0.8 միավորով և կազմել 80.8 միավոր: ՀՀ-ում արտահանման ու ներմուծման գումարային ծավալը կազմում է ՀՆԱ-ի 88.5%-ը:

• **«Ներդրումների ազատություն»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ չի փոփոխվել, սակայն դրանց նախորդող 2 տարիների նկատմամբ նվազել է 5 միավորով: Այդ ցուցանիշով մենք հավասարվում ենք Եվրոպայի միջին մակարդակին: «Ներդրումների ազատություն» գործոնի գծով «Հերիթիջի» փորձագետները ընդգծում են օտարերկրացիների կողմից Հայաստանում հողը՝ որպես սեփականություն ձեռք բերելու արգելքի և բյուրոկրատական խոչընդոտների առկայությունը:

• **«Ֆինանսական ազատություն»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ չի փոխվել և կազմել է 70.0 միավոր: Ի դեպ ցուցանիշի այս արժեքը չի տատանվել 2006թ-ից սկսած: «Ֆինանսական ազատություն» գործոնի գծով Հայաստանի դիրքը նույնպես չի փոխվել և Հայաստանը միշտ գրավել է բավականին բարձր հորիզոնականներ: Ըստ «Հերիթիջի» վերլուծության, Հայաստանում առկա է սահմանափակ պետական միջամտություն ֆինանսական համակարգի գործունեությանը և պետությունը այլևս բաժնեմաս չունի որևէ բանկում, սակայն բանկային հատվածը, որին պատկանում է ֆինանսական հատվածի ընդհանուր ակտիվների ավելի քան 90%-ը, դեռևս պայքարում է ադեկվատ երկարաժամկետ վարկեր մատուցելու համար»[1]: Նկատենք որ Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսը 25 տարիների ընթացքում բարելավվել է 25.5 միավորով՝ 1996-ի 42.2%-ից հասնելով 2019-ի 67.7%-ի: Այս տարիների ընթացքում Հայաստանը գրանցել է տնտեսական ազատության 12 գործակիցներից 10-ի բարելավվում, և հետընթաց է գրանցվել միայն 2-ում՝ կոռուպցիայց ազատության և ֆիսկալ ազատության մեջ: Հայաստանը տընտեսապես «ճնշված» երկրից դարձել է «չափավոր ազատ»: Հայաստանի տնտեսության մասին «Հերիթիջի» փորձագետները նշում են հետևյալը. «Տնտեսական բազայի զգալի դիվերսիֆիկացումը մեծացրել է Հայաստանի տնտեսության դինամիզմը: Գործարարության գործընթացների զգալի պարզեցումը նպաստել է դրանց կարգավորման դաշտի արդյունավետությանը: Վերջին տարիների ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականությունից հետո քայլեր են ձեռնարկվել կառավարության ծախքերը սահմանափակելու՝ պետական ֆինանսների խելամիտ կառավարման միջոցով: Հայաստանը բավականին լավ կատարողական է գրանցել տնտեսական ազատության շատ ոլորտներում, այնուամենայնիվ առավել խորը ինստիտուցիոնալ բարեփոխումներ են հարկավոր այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են դատական անկախությունն ու կառավարության թափանցիկությունը: Չնայած կոռուպցիայի դեմ պայքարի առաջադիմությանը, քաղաքական ու գործարար շրջանակներում առկա սերտ հարաբերությունները քրոնիզմի (ընկերներին ու իրենց հետ կապված անձանց իշխանության նշանակելը՝ առանց նրանց որակավորումը պատշաճորեն հաշվի առնելու) և անուղղակի ազդեցության երևույթների նկատմամբ մտահոգության տեղիք են տալիս: Նախկին կառավարությունը նաև որոշակի ջանքեր է գործադրել ուղղված բիզնես միջավայրի բարելավմանը հարկային հեղափոխության միջոցով, կոռուպցիայի նվազեցմանն ու արտաքին գնումների գործընթացում թափանցիկության ավելացմանը, սակայն Հայաստանի աշխարհագրական մեկուսացվածությունը, նեղ արտահանման բազան և խոշոր մոնոպոլիաները բիզնեսի կարևոր բնագավառներում երկիրը որոշակիորեն խոցելի են դարձրել գլոբալ ապրանքային շուկաներում տեղի ունեցող բացասական փոփոխությունների և հատկապես Ռուսաստանում ընթացող տնտեսական մարտահրավերների նկատմամբ: Այնուամենայնիվ, վերջին տասնամյակում ընթացող տնտեսական աճի արդյունքում, զգացվում է աղքատության ու գործազրկության մակարդակի նվազեցում [**3**]: Հա-

[1] Terry Miller, Anthony B. Kim, James M. Roberts "2019 Index of Economic Freedom"

յաստանի տնտեսական ազատության մակարդակը, 2000թ-ից սկսած, հիմնականում եղել է 60.0-69.9% միջակայքում (բացառությամբ 2004 և 2006թթ., երբ գնահատականները բարձր են եղել 70%-ից), այսինքն, ըստ «Հերիթիջի» դասակարգման, Հայաստանը վերջին 10 տարիների ընթացքում համարվել է տնտեսապես «չափավոր ազատ» երկիր, թեև հարկ է նշել, որ այդ տարիների ընթացքում Հայաստանի գնահատականը գրեթե միշտ մոտ է եղել միջակայքի առավելագույն սահմանին:

<u>Հայաստանը տարածաշրջանային համապատկերում</u>

Եվրոպական տարածաշրջանի 44 երկրների շարքում Հայաստանը գրավում է 24-րդ տեղը: (Համեմատության համար նշենք, որ Վրաստանը զբաղեցնում է 16-րդ տեղը):

Հայաստանի տնտեսական ազատության գնահատականը 2019թ-ին (67.7 միավոր) նվազել է եվրոպական տարածաշրջանի միջինից (68.6 միավոր):

ԵԱՏՄ երկրների շարքում ՀՀ-ն ունի առաջատար դիրք, ինչը գլխավորապես պայմանավորված է դրամավարկային, ներդրումների ու ֆինանսական ազատության մեջ ունեցած առավելություններով (Աղյուսակ1):

Համաձայն «Հերիթիջի» գնահատականների, նախկին ԽՍՀՄ երկրներից տնտեսապես «չափավոր ազատ» երկրների թվին են դասվում նաև Ղազախստանը, Ադրբեջանը, Ղրղզստանը, Բոսնիա-Հերցոգովինան, «հիմնականում ոչ ազատ» են համարվում Խորվաթիան, Մոլդովան, Տաջիկստանն Ռուսաստանը, Բելառուսը, Ուկրաինան, Ուզբեկստանը, Իրանը և «ճնշված» երկրների թվում է միայն Թուրքմենստանը:

«Հերիթիջ» հիմնադրամի «Տնտեսական ազատության ինդեքս 2019» զեկույցում երկրների առաջին տասնյակում են Հոնկոնգը, Սինգապուրը, Նոր Զելանդիան, Շվեյցարիան, Ավստրալիան, Իռլանդիան, Միացյալ Թագավորությունը, Կանադան, Արաբական Միացյալ Էմիրությունները, Թայվանը, իսկ վերջին տասնյակում՝ Էկվադորը, Ալժիրը, Թիմոր-Լեստեն, Բոլիվիան, Հասարակածային Գվիենան, Զիմբաբվեն, Կոնգոյի Հանրապետությունը, Էրիթրեան, Կուբան, Վենեսուելան, և Հյուսիսային Կորեան [**4**]:

Օգտագործվող գրականության ցանկ

1. Terry Miller, Anthony B. Kim, James M. Roberts “2019 Index of Economic Freedom”
2. https://www.heritage.org/index/about
3. https://www.heritage.org/index/country/armenia
4. https://www.heritage.org/index/ranking

Աղյուսակ 1. «ԵԱՏՄ երկրների Տնտեսական Ազատության Ինդեքսը ըստ առանձին բաղադրիչների»: Աղբյուր https://www.heritage.org/index/explore?view=by-region-country-year&u=636892187437943192

Երկրներ / Գործոններ	ՀՀ	ՌԴ	Բելառուս	Ղրղզստան	Ղազախստան
Սեփականության իրավունք	57.2	52.4	55.2	49.9	59.3
Կոռուպցիայից ազատություն	38.6	36.6	37.7	27.2	40.3
Դատական արդյունավետություն	46.3	45.1	51.7	27.9	56.1
Կառավարության ծախսումներ	79	62.3	41.3	54.2	83.7
Հարկային բեռ	84.7	89.4	89.4	94.1	93.4
Ֆիսկալ առողջություն	53	86.6	85.4	78.4	41
Գործարարության ազատություն	78.3	78.4	75	73.4	73.9
Աշխատանքի ազատություն	71.4	52.5	75.3	79.8	86.2
Դրամավարկային ազատություն	77.8	65.1	67	74.4	70.9
Առևտրի ազատություն	80.8	77.8	76.4	78.6	80
Ներդրումների ազատություն	75	30	30	60	50
Ֆինանսական ազատություն	70	30	10	50	50
ՏԱԻ	67.675	58.85	57.87	62.325	65.4